

վանքերին և եթէ զէնք էլ է դառնում այս կամ այն եղութիւնի ձևւորում, նա դառնում է անգիտակցաբար:

Ամփոփելով այս ամենը, հետևեալ եզրակացութիւնների կարող եմ գալ:

1. Թէև իմ բերած նիւթերից չէ երևում, որ իմ և Յուսիկ սրբազանի յիշած Մինասները նոյնն են, յամենայն դէպ, ակներև է, որ Վարչաւայի եկեղեցում թաղուած Մինասը Եաղլովեցի այն յայտնի Մինասովիչներէն է, որոնք 1672 թուին գաղթել են Վարչաւա:

2. Մայրաքաղաքի կաթոլիկ եկեղեցում թաղուած լինելու պատճառն էլ այն է, որ Մինասովիչներն անուանի մարդիկ են եղած և զուցէ դա իմ յիշած կտակ անող բարերարն է:

3. Մահուան տարեթուից երևում է, որ սա նորընծայ կաթոլիկներիցն է (թէև ինքը դուցէ չէ էլ հասկանում) և այս պատճառով թաղուած կաթոլիկ եկեղեցում:

Ստեակ Թանդեան

26 ապրիլի 1902

Ն.-Նախիջեւան



ԵՐԿԱԹԷ ԴԻՄԱԿԸ

«Արարատի» այս տարուայ առաջին համարում Գեր. Յ. եպ. Մովսիսեանցը «Անցեալ դարերի յիշատակ» յօդուածի մէջ խօսելով Կ. Պօլսոյ հայոց Աւետիք պատրիարքի մասին, ի միջն այլոց յիշում է, թէ «կարծողներ կան, որ պատմութեան մէջ յայտնի Երկաթէ Դիմակով մարդը Աւետիք պատրիարքն էր», որով կարծես նորից ծագում է այն թիւրիմացութիւնը, թէ արդարև Երկաթէ Դիմակով մարդը կարող է նաև մեր Աւետիք պատրիարքը լինել: Մինչդեռ պատմութեան մանրակրկիտ ուսումնասիրութեամբ արդէն պարզաբանուած է այդ խնդիրն, և այլ ևս ոչ մի կասկածի տեղիք չի մնում:

Բայց որովհետև Երկաթէ Դիմակը նոյն իսկ մինչև վերջին տարիներս գլուխ է եւրոպական յայտնի պատմաբանների, գիտ-

նահանսներէ, վիպասաններէ ուշադրութիւնը և մանաւանդ, Երկաթէ Ռիմակի հետ կապուած է նաև մեր Աւետիք պատրիարքի անուընդ, ուստի կարծում եմ, որ անհետաքրքիր չի լինիլ մեզ ևս ծանօթ լինել Երկաթէ Ռիմակի պատմութեան հետ:

Ներկայումս Պարիզի հրապարակներից մէկը զարգարուած է լեհական արոյրէ արձանով, որի գլուխը պոսկում է Փրանսիայի հանձարը: Բայց մի ժամանակ այդ արձանի տեղը գտնուում էր հռչակաւոր ու սոսկալի Բաստիլը, որ միանգամայն թէ՛ ամբողջ էր և թէ՛ բանդ: Սկզբում Բաստիլը Սենդ-Անտուան փողոցի բերանին շինուած երկու բուրգ էր միայն, որ նպատակ ունէր Պարիզը պաշտպանել անգլիացիների յարձակումներից, և հէնց այդ նպատակով էլ Վարուդոս V 1369-ին այդ աշտարակները՝ նորանոր յաւելուածներով, դարձրեց բերդ, ամրոց: Տարիների ընթացքում Բաստիլը ամրանալով ու ընդարձակուելով դարձաւ մի այնպիսի զարհուրելի բանդ, որտեղ մտնողն այլ ևս դժուարութեամբ կարող էր դուրս գալ: Այդտեղ բանդարկուել են յայտնի քաղաքագէտներ, բարձրաստիճան ազնուականներ ու հասարակական գործիչներ, տաղանդաւոր գիտնականներ, այդտեղ են բանդարկուել նաև քաղմաթիւ գրքեր, նախագծեր, ձեռագրեր, որոնք զանազան նկատումներով հարկաւոր են համարուած գաղտնի պահելու: Բաստիլը մի կենդանի գերեզման էր, ուր թաղում էին հասարակական, պետական և նոյն իսկ մասնաւոր անհատների շահերին վնասակար համարուած անձերին՝ օգտուելով «բանդարկութեան գաղտնի հրամաններից» (lettres de cachet), որոնք նշանաւոր չափով չարիք էին կազմում Փրանսիական ժողովրդի համար:

Ինչպէս յայտնի է lettres de cachet կոչոււմ էին Փրանսիական թագաւորների գաղտնի հրամանագիրները, որոնց տակ նախապէս ոտորագրած էին լինում թագաւորը կամ մինիստրը: Այդպիսի հրամանագիրների շնորհիւ բանդարկում կամ երկրի սահմաններից աքսորում էին այն անձանց, որոնց հասարակական կեանքից հեռացնելը կարևոր էր նկատուած տէրութեան համար: Այն մարդիկ, որոնք կապեր ունէին արքունիքի հետ, կամ որոնք հարուստ էին, միշտ հնարաւորութիւն ունէին ձեռք բերելու այդ հրամանագրներից և ըստ հաճոյից գործածել դրանք, որովհետև դրանց մէջ նշանակուած չէր լինում բանդարկութեան կամ աքսորի ենթարկուելիք անձը: Վարելի է երևակայել, թէ ինչպիսի ընդարձակ դուռ էր բացուած անձնական շահերի կամ վրէժխնդրութեան համար:

Եւ Բաստիլը միշտ լի էր «գաղանի հրամանով» ձերբա-
կալուած հալանաւորներով, որոնցից շատերին պահուած էին այդ
արգելարանի խոնաւ խցերում: որոնք այրերի բնաւորութիւն ու-
նէին: Եւ շատ-շատերը 20—30 տարիներ հեծում էին այդտեղ՝
յաճախ ենթարկուելով կտտանքների ու տանջանքների. պատա-
հում էին դէպքեր, երբ մի անմեղ հալանաւոր մոռացութեան էր
տրուում և 30 տարիներ պէտք է սպասէր, որ իրեն քննութեան
ենթարկէին: Բնականաբար «գաղանի հրամաններից» ընդարձակ
չափով օգտուում էին նաև կաթոլիկ հոգևորականներն ու ճիզ-
ուիտները, որոնց համար ոչ գութ կար, ոչ արդարութիւն, որոնք
չգիտէին խնայել մինչև անգամ 7—15 տարեկան երեխաներին:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ մի այսպիսի հաստա-
տութիւն, ինչպէս Բաստիլն էր, որը անուան հետ կապուած էին
սոսկալի եղեռնական պատմութիւններ ու մարտիրոսական չար-
չարանքներ, կարող չէր զղուանք և գայրոյթ չառաջացնել ժողո-
վրդի մէջ: Եւ ահա Ֆրանսիական մեծ յեղափոխութեան սկիզբը
դրուեցաւ նրանով, որ 1789 թ. յունիսի 14-ին խուժանը յարձա-
կումով տիրեց Բաստիլին: Բոլոր կալանաւորներին ազատ արձա-
կեց, իսկ շէնքը քարուքանդ արաւ: Մի քանի օր յետոյ, յունիսի
29-ին, աղգային ժողովը բոլորովին վերացրեց «գաղանի հրամանը»:

1698 թ. սեպտեմբերի 18-ին ահա հէնց այդ զարհուրելի
Բաստիլը մտան մի խումբ զինուած մարդիկ, որոնց զլուխ էր
անցել Սեն-Մարսը, որ Լուդովիկոս XIV-ի հրամանով Բաստիլի
բերդապետ էր նշանակուած և այդ օրն առաջին անգամ լինելով
իւր նոր պաշտօնն էր ստանձնում: Բայց նա մենակ չէր. նա իւր
հետ ընկած էր նաև մի խորհրդաւոր կալանաւոր, որ իւր դէմ-
քին սև դիմակ ունէր: Այդ չղիտէր, թէ ո՞վ էր այդ մարդը,
ինչի՞ համար էր այդպիսի անսովոր դրութեան մէջ ընկել: Այս-
քանս միայն յայտնի էր, որ Սեն-Մարսը նրան ընրում էր հարա-
ւից, Պրովանսից և ամբողջ ճանապարհին գիշեր-ցերեկ, զէնքը
ձեռին, անքուն աչքերով հսկելիս է եղել կալանաւորին և չի
թոյլ տուել, որ ոք մինի հետ յարաբերութիւն ունենայ կամ
խօսի: Բաստիլում կալանաւորի համար կանխաւ պատրաստուած
է եղել խալտիկ սենեակներից մէկը. ուրեմն դա պէտք է որ նշա-
նաւոր մի անձն լինէր:

Անցաւ մօտ հինգ տարի: 1703 թ. նոյեմբերի 20-ին, երե-
կոյեան ժամը 5-ին Բաստիլի մի քանի ծառայողներ ընդից գաղտ-
նապէս հանում են մի անյայտ դիակ և տանում թաղում ու Պո-
ղոս եկեղեցու դերեղմանատանը. ուր մատենի մէջ հանգուցեա-

լին նշանակում են Մարչիալի (Marcialy) անունով։ Դա խորհրդաւոր Երկաթէ Դիմակաւորն էր, որին բանդում անուանում էին «Պրովանսի կալանաւորը»։ որովհետեւ Սեն-Մարսը Պրովանսից էր հետը բերել և ոչ մի մարդու չէր թոյլ տուել, որ նրա հետ դործ ունենայ։

Ահա այն բոլորը, որ յայտնի էր «Երկաթէ դիմակով մարդու» մասին։

Անթափանցելի խաւարը պատել էր նրան և առատ նիւթ տալիս մարդկանց երեակայութեան ու հետաքրքրութեան։ Եւ մարդկային անհանգիստ միտքը, որ միշտ հետամուտ է դէպի խորհրդաւորն ու գաղտնին, կարող չէր գաղար առնել, մինչև որ չմերկացնէր ճշմարտութիւնը։ Հատ դիտնականներ, իմաստասէրներ, պատմաբաններ, վիպասաններ ոչ միայն Փրանսիայում, այլ և Անգլիայում, Գերմանիայում, Իտալիայում հատորներ են նուիրել այդ խնդրին և չեն կարողացել ենթադրութիւններէ սահմանից անցնել։ Վոլտեր, Փրեյրոն, Սենտ-Փուար, Լազրանժ-Հանսէլ, Գրիֆֆէ ուսումնասիրութիւններ են հրատարակել։ Մ. Տոպէնը իւր „L'homme au masque de fer“ (Երկաթէ դիմակով մարդը) ուսումնասիրութեան մէջ յիշում է 52 հեղինակների անուններ, որոնք առանձնապէս զբաղուել են այդ գաղտնիքը պարզելու համար, բայց մեծ մասամբ անաջող։

«Երկաթէ Դիմակը» գաղտնիք է եղել ոչ միայն սոսկական մահկանացուների համար, հապա և պետերի համար։ Նապոլէօն I շատ անգամ խօսելով այդ մասին ցաւ էր յայտնում, որ չգիտէ, թէ ո՞վ է այդ խորհրդաւոր կալանաւորը. Լուի-Ֆիլիպ թագաւորը նոյնպէս յաճախ խօսք էր բանում այդ մասին և ամեն անգամ յայտնում, թէ իրեն համար էլ այդ գաղտնիքը միշտ գաղտնիք է մնացել։ Նոյն է եղել նաև Լուդովիկոս XV, XVI և ուրիշների համար։

Եւ քանի «Երկաթէ Դիմակի» մասին զրուածքները աւելանում էին, այնքան էլ աւելանում էին նաև դանազան ենթադրութիւններն, ու խնդիրը փոխանակ պարզուելու աւելի ու աւելի բարդւում էր, Եւ, ըստ երեոյթին, ոչ մի յոյս չկար գաղտնիքը լուծելու, մինչև որ, Մ. Տոպէնը մանրամասն հետազօտութեան ենթարկելով Փրանսիայի արտաքին գործերի ու ծովային մինիստրութեան պաշտօնատնների մէջ գտնուած բոլոր 1660—1710 թ. բանդարկեալներին վերաբերեալ տպուած ու անտիպ նամակներն ու դրութիւնները կարողացաւ պարզել ճշմարտութիւնը և 1869 թ. հրատարակել „L'homme au masque de fer“ գրքի մէջ։ Նա այդ նպատակով ստիպուած էր քայլ առ քայլ հետևելու այն բոլոր անձանց կենցաղավարութեանը, որոնց մասին կասկած էր յայտ-

նուած, թէ «Երկաթէ Դիմակը» կարող են դրանք լինել: Եւ ահա նրա հետազոտութեան ԺԱ. գլուխը վերաբերում է Աւետիք պատրիարքին և որի հայերէն թարգմանութիւնը 1870 թ. հրատարակուած է Կ. Պոլսում Կ. Ս. Իւթիւճեանի աշխատասիրութեամբ, ծանօթութիւններով ու յաւելուածով: Այնուհետև Ֆրանսիացի յայտնի պատմաբան և հրապարակախօս Փուլկ-Բրենտանօն կարծեմ 1897 թուին հրատարակեց իւր „Légendes et archives de Bastille“ (Բաստիլլի առասպելներն ու Դիւանը) ուսումնասիրութիւնը, ուր ի միջի այլոց պարզաբանուած է նաև «Երկաթէ Դիմակի» պատմութիւնը, հետևաբար նաև Աւետիք պատրիարքին վերաբերեալ մասը: Եւ այդ մասին նոյն ժամանակները ես դրել եմ «Նոր-Դարի» մէջ: Իսկ անցեալ տարի էլ անդլիացի Տայ Հոպկինսը հրատարակեց „The man in iron mask“ (Երկաթէ դիմակով մարդը) վերնագիրը կրող ընդարձակ ուսումնասիրութիւնը, որի մէջ ի մի են ամփոփուած Երկաթէ Դիմակի վերաբերեալ բոլոր հետազոտութիւններն ու դրանց արդիւնքը, բայց դա գլխաւորապէս հիմնուած է Տոպէնի ու Փուլկ-Բրենտանօի վրայ:

Թէպէտ և ինքն ըստ ինքեան արդէն շատ հետաքրքրական էր առաջ բերել տեղեկութիւններ դէթ այն գլխաւոր անձերի մասին, որոնց վերաբերմամբ կարծիք կար, թէ կարող են դրանք լինել Երկաթէ Դիմակը, որով մեր առաջ պարզ կ'պատկերանային անցեալ դարերից խիստ շահեկան դէպքեր, բարքեր, պաշտօնական խարդաւանքներ, բայց դժբաղդաբար տեղի սղութիւնը այդ անել չի թոյլ տալիս. ուստի և ես կը աւականանամ առաւելապէս ծանրանալով Աւետիք պատրիարքի անցքերի վրայ՝ գլխաւորապէս հետևելով Տոպէնի հետազոտութեանը՝ որովհետև մինչև օրս էլ Երկաթէ Դիմակի վերաբերմամբ բոլոր հետազոտութիւնները, մանաւանդ Աւետիք պատրիարքի մասին, հիմնուած են նրա առաջ բերած փաստերի վրայ, իսկ Փուլկ-Բրենտանօն դալիս է նորանոր վաւերագրերով հաստատելու նրա եզրակացութիւնները:

Որտեղից սկիզբն առաւ Երկաթէ Դիմակի մասին գրականութիւնը:

Ամստերդամ քաղաքում 1745 թուին լոյս տեսաւ մի գիրք, որ մի այսպիսի խորհրդաւոր վերնագիր ունէր. „Mémoires secrets pour servir à l'histoire de Perse“ (Պարսկաստանի պատմութեան վերաբերեալ գաղտնի յիշատակագրեր). հեղինակը յայտնի չէ. շա-

տերը կարծում են, թէ Վոլտերը (1694—1778) պիտի լինի: Դրա ըովանդակութիւնը հետեւեալն է. Պարսից Շահ-Աբաս թագաւորը երկու որդի ունէր. մէկը հարազատ—Սեֆի Միրզա, միւսը՝ անհարազատ—Ջափար. նրանք հասակակից էին: Ջափարը դաժան, կամակոր էր և հօրն անհնազանդ, և շարունակ ժողովուրդը գրգռում էր թագաւորի դէմ: Թագաւորը սիրում էր նրան և ներում: Բայց երբ նա մի օր եղբօրը, որ թագաժառանգ էր, ապտակ խփեց, թագաւորը նրան դատի մատնեց. դատարանը մահուան դատապարտեց Ջափարին: Բայց մինիստրներից մէկը դրա փոխարէն Ջափարին զօրքի հետ ուղարկեց Ֆելզբանի սահմանները պատերազմի: Հուտով լուր տարածուեց, թէ Ջափարը ժանտախտից մեռել է և թաղուել, մինչդեռ նա կենդանի էր և դադտնի կերպով ուղարկուել Օրմուզ կղզին՝ ու բանդարկուել: Օրմուզի բերդապետին սաստիկ հրաման էր տրուած այդ բանը խիստ ծածուկ պահել. և երբ Շահ-Աբասը բերդապահին փոխադրեց Սպահան և նշանակեց միջնաբերդի կառավարիչ, նա իւր հետ բերաւ նաև Ջափարին, որը, ուրիշները հետ մի որ և իցէ դորձ ունենալիս, պարտական էր դիմակ կրել:

Այդ պատմութիւնը բացատրեցին այսպէս.— Շահ-Աբասը— Լուդովիկոս XIV է, Սեֆի-Միրզան՝ թագաժառանգ Լուդովիկոսը, Ջափարը՝ Լուդովիկոս Բուրբուներ, Վերմանդուայի դուքսը (Լուդովիկոս XIV-ի ապօրինի որդին), Ֆելզբանը՝ Ֆլանդրիան, Օրմուզը՝ ս. Մարգարիտի կղզին, որտեղ խորհրդաւոր կալանաւորը բանդարկուած էր մնում մինչև Բաստիլլ փոխադրուելը: Սպահանը՝ Պարսիզն է, միջնաբերդը՝ Բաստիլը:

Այս պատմութիւնը եղաւ գլխաւոր պատճառներից մէկը, որ Նրկաթէ Դիմակը դարձաւ ընդհանուր հետաքրքրութեան առարկայ: Դրան առաւել ևս դարկ տուեց Վոլտերը, երբ 1751 թուին հրատարակեց «Լուդովիկոս XIV-ի դարը», ուր ի միջի այլոց պատմում է, թէ Մազարինի մահից յետոյ (1602—1661 թ. Լուդովիկոս XIII-ի և XIV-ի միջոցին երկրի գլխաւոր ղեկավարը) մի անօրինակ դէպք պատահեցաւ, որը յայտնի չէ ոչ մի պատմաբանի. Ս. Մարգարիտ կղզին աջտրուեցաւ մի ազնուականի կերպարանքով մարդ, երեսը դիմակով ծածկուած. դիմակի ստորին մասը պողպատե գսպանակներով էին ամրացրած, այնպէս որ նա կարող էր առանց դիմակը հանելու կերակուր ուտել: Խոտիւ պատուիրուած էր, որ եթէ դիմակը հանելու փորձ անի, իսկոյն սպանեն: Նա այնտեղ մնաց մինչև թագաւորի վստահութիւնը վայելող մի սպայ, Սեն-Մարս անուանով, Բաստիլլի բերդապետ նշանակուեցաւ և դիմակաւոր կալանաւորին ս. Մարգարիտից

վերցնելով հետը Բաստիլյէ փոխադրեց, Ամեն բան, ինչ որ ուզում էր, տալիս էին նրան: Այ մի կասկած չկայ, որ կալանաւորը, որի դէմքից երբէք գիմակը վար առնուած չէ, ականաւոր անձն էր. նա մեռաւ 1703 թուին և թաղուեցաւ ս. Պօղոսի գերեզմանատանը:

Վոլտերի այս խօսքերից, թէ պողպատէ զսպանակներ ունէր գիմակը, տարածուեցաւ, թէ կալանաւորի գիմակը երկաթէ է, մինչդեռ գիմակը սովորական սև կտորից է եղել, և այդ միջոցին գիմել են լուի կալանաւորի անձնաւորութիւնը դադանի պահելու համար:

Մի անգամ որ դադանիքը հրապարակ էր հանուած, պէտք էր արծարծուած հետաքրքրութեան բաւականութիւն տալ, Եւ ահա «Dictionnaire philosophique»-ի մէջ Վոլտերի անունով հաղորդուած է, որ դա ոչ այլ ոք է, եթէ ոչ Լուդովիկոս XIV մեծ եղբայրը ի մօրէ: Աւելորդ է այստեղ այդ խնդրի մանրամասնութեան մէջ մտնել, միայն այսքանս ասենք, որ այդ առասպելը երեք վարիանտ ունի, բայց և ոչ մէկն էլ ճշգրիտ ուսումնասիրութեան առաջ չի գիմանում և կարող չէ «Երկաթէ Դիմակի» հերոսի առարկայ լինել: Բայց և այնպէս այդ ենթադրութիւններն ընդհանուր ընդունելութիւն էին գտել և մինչև անգամ Շամֆորի պէս մարդը (1741—1794, յայտնի հրապարակախօս և թատերագիր) հաւատում էր դրանց, Փօլսնիէն և Արնուն (1734—1795) «Երկաթէ Դիմակը» դրամայի մէջ նոյն միտքն են արծարծում, Ալեքսանդր Դիման (1803—1870) դրան հաւատում էր, մինչև անգամ յայտնի պատմաբան Միշլէն (1798—1821) միևնոյն հայեացքն է յայտնում իւր «Փրանսիայի պատմութեան» մէջ:

Այնուհետև փոքր ի շատէ հաւանականութիւն ունէր այն ենթադրութիւնը, թէ Երկաթէ Դիմակը Մոնմուտի դուքսն է:

Զեմա Մոնմուտը անգլիացի Կարոլոս II-ի անհարազատ որդին էր. ծնուած 1649 թուին, նա դաստիարակոււմ էր Փրանսիայում: Բայց Կարոլոսի ժառանգը Իօրլիկ հերցոգն էր, որ և Յակոբ II անունով թագաւորեց և կաթոլիկների կուսակից էր: Եւ որովհետև այդ ժամանակներն արդէն բողոքականութիւնը զօրեղ կուսակցութիւն էր կազմում և Մոնմուտի հերցոգը դեռ իւր հօր կենդանութեան ժամանակ մի քանի պատերազմների մէջ մեծ քաջութիւն էր ցոյց տուել, ուստի և երկրի բողոքական ժողովուրդը, մանաւանդ Հոտլանդիայում, գրկաբաց նրան պարագլուխ ընդունեց: Եւ նա այդ ընդունելութիւնից խրախուսուած՝ յայտնի ապստամբութիւն առաջ բերաւ, բայց յաղթուե-

լով՝ 1685 թ. գլխատուեցաւ խստաոխրտ և դաժան Յակոբ II-ի հրամանով:

Ստեփան «Երկաթէ Դիմակի» պատմութիւնը յարմարեցրել են նրա վրայ հետեւեալ պատճառներով. — Վարդուս II-ը սիրում էր իւր որդուն, բայց զիտէր, որ նա վաղ թէ ուշ պիտի ապօրտամւէր իւր օրինաւոր թագաւորի դէմ. ահա նա խնդրել է և խօսք է առել Յակոբից, որ եթէ, բան է, Մոնմուտի հերցոգը մի այդպիսի բան անէ և գերի ընկնի, խնայէ նրան: Եւ Յակոբը, հաւատարիմ մնալով իւր խոստմանը, նրա փոխարէն գլխատել է տուել զերի ընկած սպաններից մէկին, իսկ նրան ուղարկել Լուդովիկոս XIV-ին խնդրելով, որ դադանի պահէ նրա անձնաւորութիւնը: Նա վախենում էր իւր գերին աքսորել երկրից, կամ երկրի մէջ բանդարկել, որովհետեւ կարող էր նորից մի շփոթութիւն ծագել:

Աւանդութեան հիմը էր ծառայում և ժողովրդի մէջ պըտրտուող ենթադրութիւնը, թէ հերցոգը գեռ կենդանի է, թագնուած է և մի օր պիտի գայ ազատէ երկիրը: Ասելը դա ամեն մի երկրի ժողովրդեան աւանդութեան որոշ գիծն է՝ միշտ կարծում են, թէ իրենց սիրելի հերոսը մի օր չէ մի օր պիտի երևան գայ: Այդպէս է նաև մեր Մհերի պատմութիւնը:

Ֆրանսուա դը-Վանդոմը, Բոֆորի հերցոգը նոյնպէս «Երկաթէ Դիմակն» էր համարւում: Դա Հենրիկոս IV-ի ապօրինի որդու, Կեսարի որդին էր, ծնուած 1616 թ., — մի աղէտ և կոպիտ անձնաւորութիւն, որ միմիայն զուլանք էր առաջացնում Լուդովիկոս XIII-ի պալատականների մէջ: Բայց նա շուտով պատեւրադմաների մէջ հռչակ ստանալով՝ դարձաւ հայրենիքի պաշտպանութեան յոյսերից մէկը: Լուդովիկոս XIII-ի մահից յետոյ ժառանգը մանուկ էր և երկիրը կառավարում էր Աննա թագուհին՝ յայտնի Մադարենիի օգնութեամբ: Այդ միջոցին ծագեցան ներքին պատերազմներ, որի միջոցին Բոֆորը, կատարեալ խաղալիկ էր դարձել և ով ինչ ուզում էր, անել էր տալիս նրան: Երբ որ Լուդովիկոս XIV-ը չափահաս դարձաւ, նա թագաւորի ամենահաւատարիմ հպատակը դարձաւ, Ուստի և ոչ մի առիթ չկայ կարծելու, որ Լուդովիկոսը նրան բանդարկէր և այն էլ մի այդպիսի խորհրդաւոր կերպով: Բայց փաստն այն է, որ Բոֆորը ոտքով-գլխով անհետ կորաւ, և մինչև այժմն էլ յայտնի չէ, թէ ինչ եղաւ նա: Ահա դէպքը:

Թուրքերը 1669 թուին պաշարել էին Կրեաէ կղզին: Լուդովիկոս XIV-ը ցանկանալով օգնել կղզու քրիստոնեաներին, Բոֆորի հրամանատարութեամբ, մի ամբողջ նաւատորմիչ ուղարկեց

Արեւելէ: Ֆրանսիացիք որ հասան, թուրքերն արդէն բռնել էին կղզին և ամրացել: Բայց Բոֆորը վճռում է գիշերային մի յանդուգն յարձակում գործել: Բայց թուրքերն այդ բանը հասկանալով, ֆրանսիական զօրքը մի որոշեալ տեղ հասնելուն պէս, նրանց ոտքի տակ պայթեցնում են տկանը, և զօրքը սարսափահար եղած վախուռտ է աւելիս: Բոֆորի և սպաների յորդորը անօգուտ է անցնում: Երբ որ զօրքը վասնգից ազատուած կանգ է առնում, նոր նկատում են, որ գլխաւոր հրամանատարը չկայ. ձայն են տալիս, փնտրում են, բոլոր վերաւորներին ու սպանուածներին նայում, թուրքերի մօտ պատգամաւոր ուղարկում իմանալու, թէ նրանց գերիների կամ սպանուած ու վերաւորների մէջ չէ՞ արդեօք—ի դուր. ոչ մի տեղ չի երևում: Այդպէս էլ անյայտանում է:

Ահա այստեղից ենթադրում են, որ այս բոլոր արշաւը նախամտածուած էր Բոֆորին գաղտնի կերպով բռնելու և Բաստիլում բանդարկելու համար: Սակայն ուս շատ թեթեւ և անհիմն ենթադրութիւն է, որովհետեւ Լուդովիկոս XIV-ի օրով ոչ մի դժուարութիւն չկար Բոֆորին այնպէս անհետացնելու, որ ոչ ոք ոչինչ չիմանայ:

Այս մի քանի դէպքերն իբրեւ նմուշ առաջ բերելուց յետոյ արդէն կղիմենք Աւետիք պատրիարքի պատմութեան, որը շատ և շատ կողմերից հաւանականութիւն կարող էր ունենալ Երկաթէ Դիմակի հերոսը լինելու:

Նախ քան Աւետիք պատրիարքի մասին իբրեւ Երկաթէ Դիմակի վրայ խօսելը պէտք է ասենք, որ այդ շրջանի վերաբերմամբ մեր պատմական աղբիւրները չափազանց պակասաւոր են և մութը, այնպէս որ Տոպէնը բաւական խոշոր ծառայութիւն է մատուցել մեզ՝ հրապարակ հանելով բազմաթիւ վաւերագրեր, որոնք պատկանում են նոյն այդ դործերին մասնակցող և ուղղութիւն տուող գլխաւոր անձանց: Այստեղ անհետացրելը չի լինիլ նաեւ յիշել Կ. Պոլսոյ հայ ժողովրդի 1706 թ. Էջմիածնի Աղէքսանդր կաթողիկոսին ուղարկած խնդրագիրը, որի պատճէնը տպուած է 1863 թ. Թիֆլիսում հրատարակուող «Պառնիկ Հայոց աշխարհին» ամսագրի սեպտեմբերի համարի մէջ: Այդ վաւերագրի մէջ յիշատակուած դէպքերը հաստատուում են Տոպէնի ուսումնասիրութեամբ, և մի քանի շահեկան մանրամասնութիւններ ևս պարունակում են իրենց մէջ: Այդտեղ սկզբում տեսութիւն է արած հայոց և կաթողիկոսների մէջ առաջացած մաքառման: «Տասնեօթը աարի է, ասում են նրանք, որ Պրոպագանդայի ա-

շահերտ Կիւմիշլիսանցի Խաչատուր արեղան, որին Քէօլէ Յովսէփ վարդապետը կաշառքով վարդապետահան դաւադան տալով հայոց եկեղեցիներն է մտցրել, սկսել է հայ ոսկերիչ իշխաններին հաւատաւիփոխ անել և նրանց միջոցով հայոց եկեղեցիները մտած քարոզութիւններ է անում ու հայ վարդապետներին արգելում քարոզելու: Ժողովուրդը զայրացած ուղեցել է նրան սպանել և գանդատ է տուել թագաւորին, որի հրամանով, Եփրեմ պատրիարքի օրով, ախթարմաներին (հաւատաւիփոխ) բրածեծ են արել և թիարան ուղարկել: Բայց յետոյ, Մխիթար վարդապետի պատրիարքութեան օրով ախթարմաները նորից միանալով, հայոց եկեղեցիներին տիրել են ու Մինաս վարդապետին էլ Երուսաղեմի պատրիարք դրել: Ժողովուրդը դիմել է թագաւորին. Մխիթարին դահից ձգել են ու տեղը Մելքիսեդեկ վարդապետին դնելով ախթարմաների դէմ հալածանք հանել. բայց պատրիարքը միացել է ուրացողների հետ ու Խաչատուր վարդապետին նորից հայոց եկեղեցիները մտցրել: Ժողովուրդը բողոքել է եպարքոսին. Մելքիսեդեկը և երեք քահանայ ձերբակալուել են ու թիարան ուղարկուել: Երկրորդ անգամ պատրիարք է եղել Եփրեմ վարդապետը. բայց թոյլ ու ծերացած լինելով թէպէտ չէ միացել ախթարմաներին, բայց և ոչ էլ նրանց դէմ դրել, Էւ ահա ժողովուրդը Կարնից բերել է տուել Աւետիք վարդապետին, որ արդէն Կարնում պատերների դէմ մղած յաջող կռուովը յայտնի էր եղած: Աւետիքն իսկոյն հաւաքում է հայ վարդապետներին, քարոզութեան հրահանգներ է տալիս, ժողովրդի ներկայացուցիչներին հետ թագաւորին ներկայանալով Երուսաղեմի պատրիարքութեան խղճալի դրութիւնը ցոյց տալիս, վանքը աղատում «չար» իշխանների ձեռքից և ինքը Երուսաղեմի էլ պատրիարք նշանակում:

Այնուհետեւ պատմում է երկու անգամ աքսորուելու պատմութիւնը: Այստեղ դուրսէ անհետաքրքիր չի լինիլ նաև յիշել, որ Չամչեանը իւր պատմութեան մէջ Աւետիք պատրիարքի վերջին աքսորման միջոցին բռնի կերպով Քրանսիա տարուիլը այսպէս է նկարագրում. «Իսկ նա (Աւետիք պատրիարքը) Մելիսինէ կղզին, այնտեղից էլ Մեսինա գնալով, անցաւ Քրանսիացոց աշխարհը, և մի առ ժամանակ Մարսիլա քաղաքում ապրելով, նրանց լեզուին ընտելացաւ և մնաց կապուշին կոչուած կրօնաւորների վանքում, որոնցից մեծ խնամք և ոէր ստացաւ, և տեսնելով նրանց խստահրօն վարքն ու հոգւորական կրթութիւնը, խելքի եկաւ և իւր գործերի վրայ ապաշխարելով, շարունակ լաց էր լինում, և դառնուկի նման դարձաւ և առաքինի վարք ստացաւ: Եւ յետոյ մեծ

փառիադով հագաւ այդ կրօնաւորների զգեստը, և կեանքի վախճանին հասնելով՝ բարի մահուամբ մեռաւ:

Բայց այս տեղեկութիւններից Ս. Սահանեանի Պարիզում հրատարակած «Արևելք» երկշաբաթաթերթի 1856 թ. յունուարի համարում, «Աթէնաում Փրանսէ» շաբաթաթերթից քաղելով հրատարակուած է Աւետիք պատրիարքի Փրանսիայում կրած բռնութիւնների, բանդարկութեան, կրօնքն ուրացնելու համար եղած ջանքերի և մինչև մահն այնտեղ անցկացրած օրերի յասին մի քանի տեղեկութիւններ, որոնք սակայն համառօտ են: Այժմ համառօտելով առաջ բերենք Տոպէնի գրուածքը:

«Ահա հասանք պատմելու մարդկային իրաւանց բռնաբարութեան ամենայանդուզն մի դէպք, որ դեսպանի (Փրանսիական) մօլեկրօնութեամբ նիւթուած ու դաւով, նենգութեամբ ու խաբէութեամբ գլուխ է բերուած» — այսպէս է սկսում Տոպէնը իւր պատմութեան ԺԱ. գլուխը: Արդէն յայտնի է, որ Վ. Պոլսի հայոց պատրիարքներից մէկը, որ իւր քաղաքական իշխանութեանը հետ միանդամայն կրօնական մեծ իշխանութիւն ունէր, Լուդովիկոս ԺԴ-ի թագաւորութեան վերջին ժամանակները Վ. Պոլսից դաւով վերցուեցաւ: Բայց ի՞նչ եղաւ նրա վերջը: Արդեօք պէտք է այդ անձը ս. Մարգարտի կղզու յայտնի բանդարկեալը համարել, ինչպէս որ հաստատեցին Տօլէս և գերմանացի լուրջ պատմագիր Համմէրը. կամ, ինչպէս որ ուրիշներն էլ կարծում են, իւր կեանքը Մեսինայի բանդերից մէկի մէջ անցկացրեց, կամ Մարսիլիայի նաւարանում մնաց, և կամ Սպանիայի հաւատաքննութեան բանդերի մէջ վախճանեցաւ: Եւ ի՞նչ էին այս անլուր ոճրագործութեան պատճառները:

Պէտք է իմանալ, որ այդ միջոցին շատ փափուկ և շատ էլ ծանր էր Փրանսիական դեսպանի դրութիւնը: Դեսպանը որպէս ամենանշանաւոր կաթոլիկ պետութեան ներկայացուցիչ պէտք է կարողանար այլափառ քրիստոնեաների բազմութեան մէջ փորձաթիւ կաթոլիկների շահերը պաշտպանել՝ արդեւք լինելով միանդամայն, որ նրանք ուրիշ պետութեան հովանու տակ չմտնեն. բայց միւս կողմից էլ պէտք է չափաւորել աշխատէր կաթոլիկ քարոզիչների եռանդը, որոնք բռնուն միջոցներով աշխատում էին իրենց թիւն աւելացնել. պէտք է պաշտպանէր Փրանսիացի վաճառականների շահերը, որոնք արգելքների էին հանդիպում Թիւրքիայի, Անդլիայի, Ճենովայի և Վենետիկի կողմից, պէտք է աշխատէր զանազան պետութիւնների դէմ գրգռած պահել Թիւր-

քիան, միևնոյն ժամանակ բարեկամ մնալ կառավարութեան հետ, որի դէմ մի քանի անգամ Ֆրանսիան զէնքով օգնութիւն էր տուել . . . :

1699 թուին Լուդովիկոս ԺԴ. և Պոլսում գետպան նշանակեց Ֆերիօլ մարկիզին: Սա դոֆինցի մի աննշան ազնուական էր, որ մի սիրային դէպքի պատճառով ստիպուած լինելով հեռանալ Ֆրանսիայից, ուղևորել էր Լեհաստան, որտեղից նոյնպէս ստիպուած էր եղել գնալ Կրետէ՝ թուրքաց դէմ կռուելու. իսկ նոյնտեղից անցել էր Հունգարիա՝ ապստամբների հետ կայսերականների դէմ կռուելու: Բայց միևնոյն ժամանակ շարունակ նամակադրութիւն ունենալով Ֆրանսիական արքունիքի հետ, որին զանազան տեղեկութիւններ էր հաղորդում, ի վերջոյ յաջողեցնում է հեռացնել տալ և. Պոլսի Ֆրանսիական գետպան Շատոնէօֆ արքային և ինքը տեղը նստել: Արդէն այս համառօտ նկարագրից էլ ելնում է, որ Ֆերիօլը չափազանց բուռն բնավորութեան տէր ժարդ լինելով, չպիտի կարողանար խը պաշտօնը խոհեմութեամբ վարել: Եւ արդարեւ, գետպան նշանակուածովը մի քանի ընդհարումներ է ունենում թէ թուրքաց կառավարութեան և թէ զանազան գետպանների հետ:

Բայց սկզբում կրօնական գործերի մէջ իրեն շատ զոպուած էր պահում, մանաւանդ որ թագաւորից հրահանգ էր ստացած, որ ճիզուկա հայերին պաշտպանութիւն ցոյց տաք նրանց ցոյց տուած կրօնական եռանդի, անշահասիրութեան և կանոնաւոր վարքի համեմատ: Պէտք է զգուշանաք սակայն այն անխորհուրդ խանդից, որով քարոզիչներից ոմանք շատ հեռուն են մղւում»:

Տոպէնը այնուհետեւ նկարագրում է հայոց բարի, խաղաղ, ընկերասէր և քաղցրաբարոյ լինելը. նրանք ցրուած լինելով ոչ միայն Թիւրքիայի ու Պարսկաստանի մէջ, այլ և Թաթարստան ու Լեհաստան, ամեն տեղ ժիր ու անխոնջ աշխատասիրութեան անուն ունէին. խիտ պինդ կապուած էին իրենց եկեղեցու հետ և անդրդուելի էին. ոչ մի ծանր պարտաւորութիւնից չէին խորշում, եթէ այդ պահանջում էր եկեղեցին ու նրա հին կարգերը. արեւելքի մէջ ամենախառաւորը նրանց տաճարներն էին: Իրենց կրօնքով իրենց ազդութիւնը պահպանած լինելով, յամառ էին և հնարագէտ և դժբաղդութեան մէջ անյողդողդ համբերատար: Բայց մի դար էր արդէն, որ նրանց խաղաղութիւնը լրդովում էին հեռուից եկողները, կրօնական քարոզիչները, մինչդեռ թուրք կառավարութիւնը, օրինաւոր տուրք ստանալով բաւականացած, ոչ միայն կրօնական ազատութիւն էր տալիս նրանց, այլ և նիւթական ազդու պաշտպանութիւն էր ցոյց տալիս պատրիարքներին և առաջնորդներին:

Ի հարկէ, երբ կաթուղի քարոզիչները վսեմ անձնուրացութեամբ դնում են հեթանոսների մէջ Աստուծոյ խօսքը տարածելու, այդ սքանչելի է. բայց Հռովմի աթոռը ի վաղուց անտիմիշտ ձգտել է զանազան մանր քրիստոնեայ եկեղեցիներ ևս ձուլել, միացնել իրեն: Սկզբում այդ փորձերը խոհեմութեամբ էին կատարւում, բայց յետոյ սկսան ծիսական խնդիրներ յարուցանել, կաթուղիներին ամենախիստ պատիժներով արգիլել, որ հայադաւանների հետ յարաբերութիւն չունենան և նրանց իբր թշնամի ու բարբարոս նկատեն: Եւ հայերը այս հալածանքներին չդիմանալով, գանգատւում են Դրանը:

Ֆերիօլ նկատելով, որ գործը վտանգաւոր ուղղութիւն է ստանում, հայոց պատրիարքին և կաթուղիաց արքեպիսկոպոսին կանչում է, դաշնագիր է ստորագրել տալիս, որ խաղաղութիւն հաստատուի, բայց ճիշդութեան մեծաւոր հ. Բրակոնէի անհամաձայնութեան շնորհիւ գործը գլուխ չի դալիս. նա յայտնում էր, որ «կարող չէր համաձայնիլ, որ կաթուղիներն ամենափոքր հաղորդակցութիւն անգամ ունենան իրենց հերձուածող եղբայրներին հետ»:

Ֆերիօլ իւր խաղաղասիրական դիրքը չկարողացաւ շարունակել, նա աշխարհական գործերի վերաբերմամբ պատասխանատու լինելով իւր վեհապետի առաջ, հոգեւոր գործերի մասին պարտաւոր էր ղեկուցանել պապին, որի ներկայացուցիչն էր համարւում միանգամայն: Իսկ ճիշդութեանը մեծ ազդեցութիւն ունէին թէ Հռովմում և թէ Պարիզում: Ֆերիօլ իւր նումականների մէջ գանգատւում է նրանցից և գրում. «այդ սուրբ հայերը միայն թիարան պէտք է որ գնային»:

Աւետիքը Թոքատցի աղքատ և աննշան ընտանիքի զաւակ էր, բայց փայլուն ընդունակութեան տէր: Նա զօրեղ մաքառումն սկսեց կաթուղիների ոտնձգութեանց դէմ: Դեռ Ֆերիօլը դեսպան չէր, այլ Հունգարիայում թիւրքաց զօրքի շարքում կռւում էր, որ լսել էր Աւետիքի մասին թէ՛ նա խիստ լեզուով է խօսել Լուդովիկոս թագաւորի դէմ. և որովհետեւ Ֆերիօլ թուրքաց մէջ շատ պաշտպաններ ունէր, ուստի և եպարքոսի միջոցով աջողեցրել էր Աւետիքին աքսորել տալ: Սահայն 1701 թ. դեկտեմբերին Աւետիքը իւր հին բարեկամ (Վարնոյ նախկին գառը) Դէյլ-Լիւ-Լիւամ Ֆէյզուլիէն էֆէնդու միջոցով Վ. Պոլսի և Երուսաղէմի պատրիարք եղաւ: Սահայն Աւետիք ամեն հնարաւոր միջոց գործ դրեց, որպէս զի խաղաղութիւն պահպանի:

և Փերիօլ 1703-ին գրած նամակի մէջ յայտնում է, թէ՛ «աղա-
տութիւնն այնքան մեծ է կաթողիկոսների համար, որ քրիստոնեայ
երգրի մէջ էլ սրանից աւելին չի լինի»: Բայց Փերիօլի ու ճիզ-
ուհիաների ատելութիւնը դէպի Աւետիքը շարունակւում էր՝
դեռպանը պահանջում է եպարքոսից, որ Աւետիքին աքսորեն,
որովհետեւ նա որպէս թէ Լուդովիկոս ԺԴ-ին գրուած նամակ-
ները ձեռք է ձգել: Պահանջը չի կատարւում: Սակայն շուտով
200,000 ղինեալ մարդիկ Սուլթան Մուսթաֆա Բ.-ին գահընկէց
են անում: Շէյխ-իւլ-իսլամին սպանում և Ահմէդ Գ.-ին գահ
բարձրացնում: Երկու ամիս չանցած Աւետիքն էլ գահընկէց ե-
ղաւ, Եդի-Վուլէի բանդը գրուեցաւ, իսկ յետոյ էլ, Փերիօլի պա-
հանջով, Ասորոց Արքայադաս ամայի տեղն (հայոց գրութեան
մէջ «հեռաւոր կղզի մը») աքսորուեցաւ: Այս բաւական չէ, խեղճ
աքսորականին սկսում են նաև տանջել. Փերիօլը 1704 յունիսի
2-ին գրած նամակի մէջ յայտնում է, որ հարկ է համարել Աւե-
տիքին ջրով լցրած մութ բանդի մէջ փակել տալ: Հայերը չեն
ընդունում նոր պատրիարք Վայծակ վարդապետին և 880,000
ֆրանկի չափ կաշառք տալով (իսկ հայոց խնդրագրի մէջ ասած
է՝ նոր թագաւորին խնդիր ներկայացնելով) մէկ տարուց (հայոց
գրութեան մէջ 9 ամիս) Աւետիքին նորից պատրիարք են նըս-
տացնում:

«Հիմա հարցնում ենք, ասում է Յոպէնը, այս պարագային
մէջ ո՞վ է հալածողը և ովքե՞ր են հալածուողը: Բայց Աւետիքը
դարձեալ շարունակում է իւր խաղաղ ընթացքը, որովհետեւ Փե-
րիօլ 1705-ին գրած մի քանի նամակների մէջ գրում է. «չի խը-
լրտում». «մեծ անհաճութեամբ է վարւում և կրօնական գոր-
ծերը այստեղ շատ խաղաղ են»: «Աւետիքը ընաւ կաթողիկոսներին
չէ նեղում». «յուսամ, որ ինքն իրեն կընկնի, իսկ ես էլ նրան
ընկճելու ոչ մի առիթ չպիտի փնտցնեմ»: Միևնոյն ժամանակ
Աւետիքը գնում է դեռպանի մօտ խնդրելու, որ իւր եկեղեցի-
ների մէջ հերետիկոսների դէմ արձակուած բանադրանքը վե-
րացնէ և ճիզուհիաները, որոնք քանի ժամանակէ ի վեր հայոց
եկեղեցիների մեջ թուրքերէն քարոզ խօսելու թոյլտուութիւն էին
ստացած, առանց կրքի և չափաւոր լեզուով խօսին: Աւետիքին
ընկերացել էին 300-ի չափ երևելի և հարուստ հայեր, Փերիօլ
Աւետիքի այս պահանջը յանդգնութիւն համարելով մերժում է,
և շարունակ աշխատում է ու մի տարուց աջողեցնում (15 ամիս
պատրիարքութիւնից յետոյ) երկրորդ անգամ պատրիարքութիւ-
նից ձգել և երրորդ անգամ աքսոր ուղարկել տալ:

Աւետիքը 1706 թ. փետրուարի 25-ին գահընկեց եղաւ և ապրիլի 25-ին Պ. Պոլսից աքսոր ուղարկուեցաւ: Բայց պէտք էր այնպէս անել, որ այլ ևս չվերագառնար: Եւ ահա Ֆերիօլ կաշառում է Աւետիքին ուղեկցող շաւուշին, իսկ Քիտսի փոխհիւպատոս Բոնալին էլ յայտնում, որ Աւետիքը Քիտս մի քանի ժամ պիտի մնայ և այդ միջոցին պէտք էր նրան փախցնել: Հայր Տաշերոն ճիգուիտի գործակցութեամբ, Բոնալը վարձում է մի փոքրիկ առևտրական նաւ, որի նաւապետը Ֆրանսիացի էր, և Աւետիքին փախցնելով, պատուիրում է ուղղակի նրան Մարսէյլ տանել: Հակառակ հովերը նաւը ճենովա են հանում, ուր Աւետիքը աջողեցնում է Սպարթալի անունով մի յոյն երկու նամակ տալ, մէկը Դրան առաջին Թարգման Մաւրոկորդատօին և միւսն էլ Աստուածատուր անունով մի հայի: Բայց նամակներն ընկնում են Ֆրանսիական դեսպանի ձեռքը:

Աւետիքին տանում են Մարսէյլ և յանձնում թիարանի վերակացու դը-Մոնմորին, ուր և բանդարիւում է նաւարանի բանդերի մէջ:

Պ. Պոլսոյ հայոց տեղեկագրի մէջ այդ դէպքի մասին առուած է, որ «չար» իշխանները 40 քսակ ոսկի կաշառք են տալիս Ռէիս էֆէնդուն և ուրիշներին, և Աւետիքին բռնելով Պոհճա-ատասի կղզին աքսորում, տեղը դնում Մարկոս վարդապետին, Երուսաղեմայ առաջնորդ նշանակում Սոյ Մատթէոս կաթողիկոսին, հերձուածողները «մեր եկեղեցեաց տիրեցին և լուսաւորչական ժողովրդին անտանելի հալածանք ըրին: Մեր գլխաւորներէն 40 մարդու չափ և երկու քահանայ աքսորեցին և 40 մարդ ալ թիարանը և ուրիշ խոտադոյն տեղեր բանդարիւ տուին»: Մատթէոսը Մարտիրոս վարդապետին եպիսկոպոս է ձեռնադրում, կառավարութիւնից Աւետիքի (գեռ բանդ եղած միջոցին) գլխատումը պահանջում, բայց անաջող. ապա Աւետիքին «ծովի վրայ ուրիշ Ֆրանկի նաւ մը նետելով, ոտքը ձեռքը շրջթաներով կապած Ֆրանսացի երկիրը տարին և Մեոինէ բաղաքին բերդը դրին . . . Երկու ամիս ետեւ ձեռքէն գիր մը եկաւ . . . օգնութիւն կ'անդրէր» (ինչպէս երևում է «գրի» պատմութիւնն աւանդութիւն է լոկ):

Հայերն այս ամեն անցքերի մասին տեղեկացրել են նորապոսակ Թաղաւորին, որի հրամանով եպարքոսն անմիջապէս պաշտօնանկ է լինում, Ռէիս էֆէնդին բանդարիւում, տանջանքների ենթարկւում, կայքը յարքունին դրաւում, բոլոր հայադաւաններն ազատւում են, Մարտիրոս պատրիարքին ժողովուրդը Լուսաւորչի տօնին պատարագի ժամանակ ընմից ցած առնում և

նրա հետ էլ՝ Մատթէոս կաթողիկոսին ու եօթը հայերի՝ եպարքոսին տանում, բանդարկել տալիս, Խարբերդի Տ. Միքայէլ քահանային պատրիարք նստեցնում՝ մինչև որ Աւետիքին գանձն, բերեն, որովհետև կառավարութիւնը խտիւ հրաման էր տուել Աւետիքին արսորից վերադարձնելու։ Ախթարմաներից էլ 120 հոգու չափ թիւարան, բանդ ու արսոր ուղարկում, բանդարկեալ հայ հոգևորականները տանջանքների տակ խոստովանում են Աւետիքի գլխին եկածները։ Եպարքոսը կանչում է Ֆր. դեսպանին և պահանջում, որ եթէ Աւետիքը չվերադառնայ, հետևանքը շատ չար կլինի։ Բայց դեսպանը պնդում է, թէ ոչ մի բանից տեղեկութիւն չունի։ Իսկ այդ միջոցին երկու թուրք վկայութիւն են տալիս, թէ Աւետիքին «Մեսինէ բաղաքին նազարէթը» տեսել են (գուցէ Մարսէյլի Լազարէն)։

Այս տեղեկութիւնները համառօտելուց յետոյ հայոց տեղեկադրից, շարունակեմ Տօպէնի հետազօտութիւնից քաղուածքներ անել։

Լուսեմլիկոս տեսնելով, որ Մարսէյլը շատ վտանգաւոր քաղաք է, որովհետև հայերը հեշտութեամբ կարող էին լմանալ Աւետիքի տեղը, 1706 թ. նոյեմբերի 10-ի հրամանագրով պատուիրում է բազմաթիւ ու անկասկածելի պահապաններով շրջապատած «Փրոմնտիայի միւս ծայրը» փոխադրել Աւետիքին՝ բոլոր գաւառապետներին ու դեղապետներին խտիւ պատուէր տալով, որ հարկաւոր օգնութիւնը ցոյց տան փոխադրողներին։ Եւ Աւետիքին տանում էին Բենեաիկդեան մի վանք, որը Բրիտանի ու Նորմանդիայի նախկին սահմանի վրայ, չորս կողմը ծովով պատած, մի նեղ, վայրենի ու ահաւոր ապաստածի վրայ էր կառուցուած։ Արքային էլ հրաման էր տրուած, որ խիստ զգուշութեամբ պահէ նրան «առանց ընաւ թոյլ տալու», որ որ մինի հետ ոչ բանաւոր և ոչ դրաւոր հաղորդակցութիւն ունենայ։ Միաբանները զղոււմ էին նրանից, որպէս կաթողիկոսականից։ Տասն ամիս նրան չէին թոյլ տալիս իրենց ազօթքին մասնակցելու և ըղորդովին առանձնութեան էին մատնած։ 1707 թ. հրաման է գալիս, թէ կարելի է թոյլ տալ պատարագ լսել և խոստովանուել։ Եւ որովհետև Աւետիքը Ֆրանսերէն չգիտէր, ուստի խնդրուած էր, որ Հռովմից մի արևելեան լեզուներ գիտցող ուղարկուի, որպէս զի Աւետիքի բերանից դադանիքներ իմացուին։ Աւետիքի առաջին խօսքն էր. «Թող դատեն ինձ. եթէ մեղաւոր եմ — թող պատժեն, իսկ եթէ արդար — արձակեն»։ Բողոքը Վերսալը դնաց ու լսեղդուեցաւ։

Իսկ այդ միջոցին թէ Հռովմից և թէ Վ. Պոլսոյ դեսպանից

ստիպողական թղթեր են ստացւում: որ կալանաւորին խիստ ծածուկ պահեն, Եպարքոսը դեռ պանից տեղեկութիւն է հարցնում. սա չքմեղո է ձեռնում: Աւետիքին ուղեկցող չաւուշը տանջանքների ստիպմամբ խոստովանւում է եղելութիւնը: Նորից պահանջ Գերիօլից, նորից — անդիտութեան պատասխան: Սաստիկ հալածանք ելաւ կաթոլիկների դէմ. 3 հոգի գլխատուեցան. ձիգուիտներին քարոզչութիւնն արգիլուեց, հաստատուած տպարանը քանդուեցաւ, խիստ շատերը տանջանքների մատնուեցան, հայոց երկու պատրիարքները թիարան ղրկուեցան, Աւետիք նորից պատրիարք հրատարակուեցաւ և Յովհաննէս վարդապետը տեղապահ նշանակուեցաւ և սկսաւ խստութիւններ բանեցնել. հալածանքը տարածուեց բոլոր Թուրքիայի մէջ: Բոլոր հայոց եկեղեցիների մէջ ամեն երեկոյ աղօթքներ էին լինում Աւետիքի ազատման համար: Ռոգոսթոյի մէջ մի ինքնակոչ կեղծ-Աւետիք է երևան գալիս և ահագին գումարներ հաւաքում. նա բանդարկում է, բայց կաշառքով բանդից փախչում: Մի հայ էլ մեծ պարգևներ է ստանում երբ հաղորդում է, թէ Աւետիքին Հոլանդիայումն է տեսել: Մի քիչ յետոյ երկու գերի թուրք լուր են բերում, թէ Աւետիքը Մայլտա կղզու մէջ բանդարկուած է, և հայերը գերիների գլխագինը տալուց յետոյ, նաւ վարձած Մայլտա են դնում Աւետիքին ազատելու:

Սահայի թուրք կառավարութիւնը շարունակ պահանջում էր իւր հպատակը յետ դարձնել, իսկ Գերիօլ պնդելով, թէ ոչ մի տեղեկութիւն չունի այդ մասին, առերեսո պատրաստակամութիւն էր յայտնում, որ ամեն հնարաւոր միջոց գործ կդնէ Աւետիքին գտնելու համար: Մինչդեռ միւս կողմից էլ շարունակ պնդում էր իւր կառավարութեանը, թէ «աղաչում եմ նրան մութ տենեակի մէջ փակել տաք, որպէս զի ամենեւին լոյս չտեսնի»: Միևնոյն բանն էին գրում Լուդովիկոսի կառավարութեան նաև Հռովմից, և արտաքին դորժերի մինիստր Տոբսի մարկիզը երկու անգամ Տրէմոյլ կարգինալին պատասխան է գրում և հանգստացնում. «Նոր հրամաններ տրուեցան, գրում է նա, որ պատրիարքի վրայ հսկողութիւնն ու ուշադրութիւնը զօրացնեն: Բացի կերակուր տուողից ոչ ոք նրա երեսը չի տեսնում և հետը նշանացի են խօսում: Կիրակի և տօն օրերն էլ պատարագի տանելիս նրան ջուկ տեղ են կանգնեցնում»: Յայտնում է նոյնպէս, որ հայեր եկել են Մարսէյլ պատրիարքին փնտրելու, շուտով Աւետիքի ծառան էլ պիտի գայ. եկածովը պիտի բռնուի ու նեղ բանդի մէջ փակուի: Թագաւորը ինքն էլ անհանգիստ էր և իւր նամակների մէջ թոյլ էր տալիս կեղծ ու սուտ բաներ գրել՝ թուրքաց կառավարութիւնը խաբելու համար:

«1709 թ. դեկտեմբերի 18-ին մի ամենանշանաւոր բանդարկեալ բերուեցաւ, որի անունը ծածուկ է պահուում: Այսպէս է գրում Բաստիլի վերակացուներից մէկը — Դիւթոնկան — իւր օրագրութեան մէջ: Այդ բանդարկեալը Աւետիք պատրիարքն էր. Լուդովիկոս XIV կղզիացած մենաստանը բաւական ապահով չհամարելով ծերունի պատրիարքին, երկու տարի Սեն-Միշէլ վանքում պահելուց յետոյ Բաստիլ՝ փոխադրելու հրաման էր արձակել և պատուէր տուել, որ «այս նոր բանդարկեալին ամենեւին թոյլ չտրուի, որ ոք մինի հետ հաղորդակցութիւն ունենայ»: Թէ Սեն-Միշէլի վանքում և թէ Բաստիլի մէջ նրան խոստովանահայր էին նշանակել մի հայադէտ կրօնաւոր, որ շարունակ կաթոլիկներին վերաբերեալ հայերէն գրքեր էր տալիս կարգաւ: Միւսին ժամանակ ոչ մի միջոց չէին թողնում նրան ստիպելու համար, որ միանայ կաթոլիկութեան: Եւ ծերունի, բազմաշարժար պատրիարքը չդիմացաւ և 1710 թ. սեպտեմբերի 22-ին, Պարիզի նօսյլ կարգինալի ներկայութեամբ հայերէն մի դաւանագիր տուաւ, որի լատիներէն մի օրինակը կարգինալին յանձնուեց, երկրորդը՝ արտաքին գործերի պաշտօնեային և երրորդը՝ իրեն: Բանդից ազատուելու միակ միջոցը այս կրօնափոխութիւնն էր:

«1711 թուի առաջին ամիսները Պարիզի Ֆերու փողոցի մի փոքրիկ տնակից, ամեն առաւօտ դուրս էր գալիս մի ծերունի՝ վշտից ու ձախորդութիւնից քան թէ տարիքից կորացած, դէմքը խոր խորշոմներով կնճռոտած, աչքը գրեթէ մարած, հայկական զգեստի մնացորդը վրան պահած, տկար մարմինը դաւաղանի օդնութեամբ կանգուն բռնած: Նա Սեն-Միւլպիտի եկեղեցին էր դնում, որին քահանայ նշանակուած լինելով, ամեն օր պատարագ էր մատուցանում»:

Այս Աւետիքն էր, որ իւր թարգմանի հետ ապրում էր այդ տնակի մէջ և բանդից դուրս գալուց մի տասը ամիս յետոյ 1711 թ. յուլիսի 21-ին հոգին աւանդեց — օտարութեան մէջ, այն եկեղեցու դրիւմ, որ այնքան վիշտ էր պատճառել իրեն: Եւ նրա մահուան մասին կազմուած տեղեկագրի մէջ ասուած էր, թէ թագաւորը մեծ ցաւ է զգացել Աւետիքի մահը լսելով, թէ հէնց որ այդ օտարագրին կարողացել է հասկացնել իւր ո՛վ լինելը, թագաւորը շտապել է նրան աղատութիւն շնորհել, և թէ երբէք թագաւորը հաւանութիւն տուած չէ եղել այն անիրաւութիւններին ու բռնութիւններին, որոնք կարող էին առանց թագաւորի գիտութեանը գործուած լինել Թուրքիայի մէջ՝ հանդուցեալի անձի դէմ:

Բայց այլ ևս այդպիսի կեղծիքների կարիք չկար Թուրքիոյ առաջ արդարանալու համար. այնտեղ արդէն քանի-քանի եպարքոսներ էին լիովնուած և Աւետիքը մոռացուած էր:

Այն միջոցին, որ Աւետիքը Պարիզում մեռնում էր, Ֆերիօլը, իբրև խելագար, զօրով նաւ էր դրուած և Ֆրանսիա էր բերւում: Սակայն նա արդէն սկսել էր զգալ իւր յանցանքը, որովհետև դեռ 1709-ին գրում էր. «Միայն մի բան գիտեմ, որ կարող է ինձ յանցանք համարուել, դա—Աւետիք պատրիարքի յափշտակութիւնն է»:

Ինչպէս ընթերցողը տեսնում է, բոլոր պարագաներն էլ այնպէս դարձուած են, որ ամենայն հաւանականութիւն կար կարծելու, թէ «Երկաթէ Դիմակը» Աւետիք պատրիարքն է:

Նախ որ Աւետիքի յափշտակութիւնը միջազգային իրաւունքների ամենախայտառակ ոտնահարումն էր և եթէ դադտնիքը երևան դար, ամօթալի ստուեր պիտի ձգէր այդ Արև-թագաւորի փառաւոր իշխանութեան վրայ: Երկրորդ՝ թուրքաց կառավարութիւնն անշուշտ պիտի բաւարարութիւն պահանջէր իւր վեհապետութեան հասած ամենամեծ անարգութեան համար՝ — համարձակուել էին իւր հպատակին յափշտակել: Երրորդ՝ Աւետիքը կաթոլիկութեան ամենաեռանդուն գիմադրողներից մէկը և ղեկավարը լինելով, ոչ մի կերպ ցանկալի չէր ճիգութաներին, որ նա վերստին աղատութիւն ստանար: Ուստի և թէ՛ կաթոլիկների և թէ՛ Լուդովիկոսի շահերը պահանջում էին, որ Աւետիքը թաղուած լինի բացարձակ անյայտութեան մէջ և ոչ սքի հետ հաղորդակցութիւն չունենայ: Բնական էր, որ եթէ այդ միջոցին Երկաթէ Դիմակով մարդ կար, այդ պէտք է որ Աւետիք պատրիարքը կարծուէր:

Դը Տոլէս ասպետը (Սերիայում հիւպատոս եղած) Կ. Պոլսոյ դեսպան դը-Բոնակի ձեռագիր մի յիշատակագրի մէջ կարգացած լինելով, թէ Աւետիք պատրիարքը Ֆերիօլի ձեռքով հեռացուած ու նախ ո. Մարգարտի կղզին, ապա և Բաոտիյլ բանդարիւում է, իսկոյն մտածում է, թէ Երկաթէ Դիմակը — Աւետիք պատրիարքն է: Նրա այդ կարծիքը ժամանակին մեծ հաւանութիւն դտաւ: Սակայն Ֆրանսիայի արտաքին գործերի պաշտօնեայ դը-Վերթէնը իւր գիւնանատնից քաղելով յայտարարեց, թէ արդարև Թիւրքիայից մի անձն վերցուելով բերուած է Ֆրանսիա, բայց այդ անձը 1706 թ. սկիզբները դեռ Կ. Պոլսումն էր գտնուում, մինչդեռ Երկաթէ Դիմակը Բաոտիյլ մտել է 1698

թ. և վախճանուել 1703-ին: Դը-Տուէս լիովին համաձայնեցաւ դրան, բայց յետոյ սկսաւ պնդել, թէ այդ վերջին թուականները գիտամբ ազաւաղուած են, որպէս զի ճիշդակաները իրենց արդարացնելու միջոց ունենան:

Աւելորդ եմ համարում այստեղ մի առ մի առաջ բերել դը-Տուէսի ենթադրութիւնները, որոնք Մ. Տոպէնի հրապարակ հանած վիստադրերով լիովին հերքուած են:

Արդ, ո՞վ է ուրեմն Երկաթէ Դիմակը:

Անշուշտ ընթերցողն իրաւունք ունի այս հարցը տալու, նախ՝ որովհետեւ հետաքրքիր է վերջապէս իմանալ, թէ ո՞վ է այն անձը, որ այսքան տարիներ, դարեր մարդկանց մտքերն է գրադեցրել, և երկրորդ՝ մինչև չապացուցուի Երկաթէ Դիմակի ով լինելը և ինչ դործի համար դադարնի մնալը, միշտ կմնայ նաև մի աեսակի կասկած, թէ արդեօք դարձեալ այս կամ այն անձը չէ՞ դա: Ուստի և ես ուղղակի կդիմեմ դրան, մի կողմ թողնելով միւս անձանց, որոնց մասին նոյնպէս կարծիքներ կան, թէ կարող են Երկաթէ Դիմակը լինել:

Իտալիան կազմուած էր զանազան մանր իշխանութիւններէց և Սպանիան, Ֆրանսիան, Աւստրիան հաւասարապէս աչք ունէին նրա վրայ: Թէպէտ Ֆրանսիացիք արդէն ձեռք էին քաշել Իտալիայից և իրենց ուշադրութիւնը դարձրել էին հիւսիսային-արևելեան սահմաններն ընդարձակելու վրայ, բայց Լուդովիկոս ԺԴ. նորից ուղեց Իտալիայի բազդը իւր ձեռքին ունենալ: Նա արդէն ախրում էր Պինիերօլ բերդին, որ իշխում էր Իտալիայի հիւսիսային սարերի գլխաւոր մուտքի վրայ: Սակայն Ֆրանսիական ազդեցութիւնը կատարեալ անելու համար հարկաւոր էր ձեռք բերել նաև Վաղալէ բերդը, որ պատկանում էր Մանտուայի դուքս Վարոլոս IV-ին: Եւ հանգամանքները շատ նպաստաւոր էին. Վարոլոս IV-ը չափազանց ղեղխ և շուայլ կեանք անցկացնելով՝ միշտ կարեք ունէր փողի, ուստի և նրա երկրի բոլոր եկամուտներն ազգիւրները տարիներ առաջ ծախուած էին լինում դանազան վաշխառուների: Եւ որովհետեւ նա իւր կեանքի մեծ մասը օտար երկրներում էր անցկացնում և ամենևին աչքով աչք չունէր իւր երկրի կառավարութեան վրայ, ուստի և հարկաւոր էր ունենալ մի կառավարիչ: Այդ կառավարիչը հանդիսացաւ Էրկուէ-Անտոնիօ Մագաիօլին, որ վերին աստիճանի վառասէր, տաղանդաւոր և կրթուած անձն էր և արդէն քաւահան մօտեցած լինելով Վարոլոսին, յոյս ունէր նրա գլխաւոր մինիստրը լինել և դրա համար յարմար առիթ էր փնտրում նրան մի խոշոր

Ժառայութիւն մատուցանելու համար: Նոյն միջոցին Վենետիկում Ֆրանսիական թագաւորի ներկայացուցիչն էր Դէստրաւաբլան, որը նոյնպէս մեծ ջանք էր գործ դնում իւր կառավարութեանը մի այնպիսի ծառայութիւն մատուցանելու, որ աչքի ընկնի, եւ նա շատ լաւ գիտէր, որ Լուդովիկոս XIV-ը փափագելով փափագում էր Վազալէին տիրելու, իսկ Վարդուսն էլ փողի պէտք ունի: Նա դիմեց Մատտիօլին: Երկրի համար ևս իրենց չլեհապետներին մեծ ծառայութիւն ցոյց տալու առիթ էր ներկայանում: Եւ ահա յղանում են Վազալէն Վարդուսից գնելու միտքը: Բայց որովհետեւ միւս պետութիւնները կարող չէին թոյլ տալ մի այդպիսի բան անել, ուստի և գործը պէտք էր շատ դադտնի անել: Ամեն բան աջող էր դնում: Մատտիօլին մինչև անգամ Պարիզ դնաց և Լուդովիկոս XIV-ից մեծարուելով թանկագին ընծաներ ու խոշոր գումար ստացաւ: Վարդուսը պայմանը ստորագրել էր և 100,000 էկիւով համաձայն էր Վազալէն յանձնել Ֆրանսիացոյ:

Բայց յանկարծ Մատտիօլին, շահագիտակա՞ն նպատակով, թէ՛ նկատելով իւր հայրենիքի վտանգաւոր դրութեան մէջ ընկնելը, ուզեց իւր մեղքը քաւել և Վազալէն փրկել, ուստի և այդ գաղտնիքը ծածկաբար յայտնեց ուրիշ պետութիւններին ևս: Բայց արդէն ամեն ինչ պատրաստ էր Ֆրանսիացիներին կողմից Վազալէն զրաւելու համար և միայն հարկաւոր էր Վարդուսի ստորագրած պայմանագիրն և մի քանի փոփոխութիւններ ևս: Իսկ այդ ամենը, ինչպէս նաև ուրիշ ծանրակշիռ վաւերագրերը Մատտիօլի մօտ էին դառնում, և նա էլ դիմամբ դանդաղեցնում էր գործը: Աւստի և Դէստրաւաբլ, իւր կառավարութեան համաձայնութեամբ, Մատտիօլին խաբկանօք մի ամայի տեղ տարաւ և դարան մտած մարդկանց միջոցով փախցրեց, տարաւ Պինիերօլի ամրոցը: Այդտեղից, մահու սպառնալիքի տակ, նա գիր գրեց հօրը և պահանջեց բոլոր վաւերագրերն ու յանձնեց Ֆրանսիացոյ:

Ահա այդ Մատտիօլին է, որ յետոյ փոխադրուեցաւ հարաւային Ֆրանսիա, ապա և Բաստիլ և մինչև մահը սև դիմակ էր կրում: Նրա յափշտակութիւնն այնքան արագ էր կատարուել, այնքան ճարպիկ ու գաղտագողի, որ ոչ մի հնար չեղաւ գտնելու նրա ինչպէս և որտեղ անյայտանալը: Ֆրանսիական կառավարութիւնը իւր վարկն ու ծածուկ գործերը պահպանելու համար ստիպուած էր ամենախիստ գաղտնիք պահել Մատտիօլի չլերաբերմամբ: Յափշտակութեան դէպքը տեղի ունեցաւ 1679-ին:

94-ին նրան Պնիեբուրգի փոխադրել են ս. Մարգարտի կղզին, իսկ 1698-ին էլ Բաստիյլ, ուր և 1703-ին մեռել է:

Թէպէտ և Աւետիք պատրիարքի վերաբերմամբ առաջ բերուած տեղեկութիւնները մեր բանասէրներին պէտք է ենթադրել, որ արդէն յայանի են, բայց որովհետեւ Տոպէնի գրուածքի ՓԱ. գլխի թարգմանութիւնը հրատարակուած էր սրանից 32 տարի առաջ, իսկ մենք սովորաբար խիստ կարճ յիշողութիւն ունենալով շատ շուտով մոռանում ենք նոյն իսկ մեր երէկուայ պատմութիւնը, մանաւանդ որ, ինչպէս Գեր. Յուսիկ եպիսկոպոսի յօդուածից երևում է, դեռ մեղանում շատերի մէջ տիրում է այն կարծիքը, թէ Երկաթէ Դիմակը կարող է լինել մեր Աւետիք պատրիարքը, որի մասին, եթէ չենք յիշուում, առաջին անգամ մեղանում գրողը եղաւ Երջանկայիշատակ Միքայէլ Նալբանդեանցը, աւելորդ չհամարեցի մի փոքր երկարել այդ խնդրի վրայ՝ համարելով այդ շահեկան նիւթ: Սակայն խնդրի աւելի մանրամասնութիւններով հետաքրքրուողը պէտք է դիմէ յօդուածիս սկզբում ցոյց տրուած աղբիւրներին:

Ի վերջոյ յիշենք նաեւ, որ Մ. Տոպէնի գրքի հրատարակութիւնից յետոյ Տիւրկան անունով մի ճիշդուիտ վարդապետ աշխատեց հերքել Տոպէնի գրածները և պաշտպանել ճիշդուիտներին, սակայն Մ. Տոպէն ի նորոյ հրատարակած վաւերագրերի հեղեղի մէջ խեղդեց նրա ձայնը: Այդ յաւելուածը չկայ հայերէն թարգմանութեան մէջ:

Մուտէ Վարդապետ



ՀԻՒՆՔԵԱՐՊԷՅԵՆՏԵԱՆԻ ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

1881 թուականէն առդին մեր տղգային թերթերու մէջ քանի քանի անդամներ այլեւայլ յօդուածներով խօսուած է Հիւնքեարպէյէնտեան Ստուգաբանական բառարանի մասին՝ երբեմն ձեռնհաս, բայց մանաւանդ անձեռնհաս անձերու կողմէ: